ԱԴԱՄՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ
ԵՊՀ
Արտասահմանյան գրականության
ամբիոնի ասպիրանտ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԵՐԱԶԱՆՔ. ԴՐԱ ՎԵՐԱՓՈԽՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ՈՒ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՖԻԼԻՊ ՌՈԹԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր.- *ամերիկյան երազանք, ամերիկյան ողբերգություն, հովվերգություն, Ֆիլիպ Ռոթ, ինքորոշում, ինքնաժխտում*

Ամերիկյան երազանքի ու դրա վերափոխման թեման դեռ իր կենդանության օրոք դասական դարձած ամերիկացի հրեա գրող Ֆիլիպ Միլթոն Ռոթի ստեղծագործության մեջ երկրորդ ամենամեծ թեման է ամերիկանում՝ հրեաների ձուլման խնդրի թեմայից հետո: Ստեղծագործական ուղու սկզբում այս հեղինակը հիմնականում գրում էր ԱՄՆ-ում ներգաղթյալ հրեաների հոգեբանության, ազգային ինքորոշման փնտրտուքի խնդիրների մասին («Պորտնոյի բողոքը», «Ցտեսությո՛ւն, Կոլումբո՛ս», «Թեթև տա՛ր», «Գրական սևագործ» և այլ ստեղծագործություններ):Ուշադրությունը ամերիկյան թեմաների նկատմամբ, որոնք են քաղաքական հոսանքների ազդեցությունը հասարակ մարդկանց կյանքի վրա, աբսուրդի հասցված քաղհավասարությունը, վիետնամական պատերազմի խնդիրը, ամերիկյան երազանքի պատրանքային, ոչ իրական լինելը և այլն, ձևավորվել է Ռոթի մոտ նրա գրողական աղու աշ շրջանում՝ հիմանականում 90-ականներից հետո: Բացառություն են միայն «Ամերիկյան մեծ վեպ»-ը (1973թ.) և «Մեր ավազակախումբը» պիեսը, որը գրվել է 1971թվականին: Ամերիկյան կյանքի մութ կողմերի թեման արծարծվել է նրա՝նշված նախորդ երկու, ինչպես նաև՝ «Դավադրություն Ամերիկայի դեմ»(2004թ.),«Վրդովմունք»(2008թ.) «Նեմեսիս»(2010թ.) և մեկ թեմատիկ եռագրություն կազմող «Ամերիկյան հովվերգություն»(1997թ.), «Իմ ամուսինը կոմունիստ է»(1998թ.), «Մարդկային խարան» (2000թ.) գործերում:Ամերիկացի հրեա գրողը երիտասարդ տարիներին ավելի շատ տուրք էր տալիս իր եբրայական էությանը, հասուն տարիներին ավելի կենտրոնանում է իր երկրորդ՝ ամերիկյան կողմի վրա: Նրա բոլոր գրքերի

հերոսները(բացի «Նա առաջ այնքան լավ աղջիկ էր» վեպի) ներգաղթյալ հրեաներ են,իսկ նրանց ծնողները հրեաներ են, որոնք ամերիկյան չափանիշներով անհաջողակներ են, բայց որոնց՝ Ամերիկայում ծնված զավակները մեծ հույսեր են ներշնչում, ու թվում է՝ պետք է մեծ հաջողությունների հասնեն «հնարավորությունների երկրում»։Բացատրելու համար Ռոթի՝ ամերիկյան երազանքի կատմամբ վերաբերմունքը, նախևառաջ պետք է տալ երկու պարզաբանում.

1. «Ամերիկյան երազանք»՝ «American Dream» բառակապակցությունն առաջին անգամ օգտագործվել է 1884 թ.-ին Հենրի Ադամսի կողմից վերջինի «Ամերիկայի Միացյալ Նահանգների պատմությունը» գրքում: Ըստ Ադամսի,այնանրջանքէ մի երկրի մասին, որտեղ յուրաքանչյուր մարդու առջև բացվում են հնարավորություններ սեփական ընդունակությունների ու արժանիքների չափով: «Dream» բառը ծագում է հին անգլերեն «ուրախություն», «երգ» բառից[1], բայց ունի նաև մեկ այլ իմաստ՝ երազ, անուրջ[2], այն, ինչ տեսնում են քնած վիճակում, ուր գործում է միայն երևակայությունը: Այս իմաստը ակնարկում է՝ որքան հեռու կարող է լինել այդ «dream»-ն իրականությունից:

2. Ինչու՞ հենց «ամերիկյան». առաջին անգամ ոտք դնելով այդ մայրցամաք՝ եվրոպացի և ասիացի փախստականներն ու աքսորականները ձերբազատվում էին սեփական անցյալից, նրանք հնարավորություն ունեին իրենց և կերտել նոր՝ ավելի լավ պետություն, ուր քաղաքացիները զերծ կլինեին պետական հետապնդումից, պետական անկատար համակարգի բերած դժբախտություններից ու անարդարությունից և այլն: Նրանց հնարավորություն էր տրված ամեն ինչ սկսել նոր, մաքուր էջից, ինչպես իրենք ամերիկացիներն են ասում՝ from scratch: Իդեալական երկրում ապրող ամերիկացու երազանքը «երկրորդ Ադամի» երազանքն է, որին բախտ է վիճակվել կրկին հայտնվել դրախտային այգում, որտեղից, սակայն, չաքսորվելու համար պիտի զերծ մնա «առաջին Ադամի» թույլ տված սխալներից:Այս հիմնադիր հայրերի սերունդները չեն ապրում իրենց նախնիների հողի վրա. նրանք օտար հողում են և պետք է անաչար գնահատեն այդ երկրի դրական և բացասական կողմերը: Ինչպես Սթայնբեքի «Մեր հոգսերի ձմեռը» վեպի մեջ էր տրվում հարցադրումը՝ ինչի՞ համար եմ ես սիրում Ամերիկյան, այնպես էլ Ռոթի երկերում

1 Тешева М.М. кпн, Бузарова Е.А. Кпнконцепт «Американская Мечта»: Его Структура И Составляющие В Произведениях Ф.С.Фицджеральда «Великий Гэтсби» И Т.Драйзера «СестраКэрри» Http://Rusnauka.Com/12_Nbg_2016/Philologia/3_210624.Doc.Htm

2 A. Lazaryan, N. Hambardzumyan, A. Hairapetyan, English-Armenian Dictionary, ՄԱՆՄԱՐ հրատ.,Երևան, 2011թ.,էջ 182

ներգաղթյալ հրեաները պետք է պատասխանեն՝ինչու՞ պետք է սիրեն երկիրը, որ իրենց նախնիներինը չէ, և ի՞նչ բացասական ու դրական կողմեր ունի այն:

Ֆիլիպ Ռոթի ստեղծագործության մեջ պատկերվում է երկու սերունդ՝ ավագն՝ «առաջին Ադամի», կրտսերը՝ «երկրորդ Ադամի» տեսքով: Ռոթը վերլուծում է ամերիկյան երազանքը ազգային առասպելի տեսանկյունից, ցույց տալիս դրա հակառակ կողմը՝ ամերիկյան երազանքի կերպարանափոխությունը, թե ինչպես անսահման հնարավորություններ ունեցող մարդը կարող է հայտնվել ծայրահեղ դժբախտության մեջ կամ, ի վերջո, պարզել, որ իր կյանքում ունեցած կարծեցյալ հաջողությունն իրականում պատրանք էր:Անցնենք Ռոթի ամերիկյան եռագրության երեք վեպերի վերլուծությանը.դրանցում որպես նարատոր հանդես է գալիս հեղինակի ամենասիրելի տարանցիկ կերպարը՝ Նաթան Ցուքերմանը, ով, որպես գրող, գրի է առնում երեք վեպերի գլխավոր հերոսների պատմությունները: Նաթանը ներկայացնում է ամերիկացի հրեայի եբրայական կողմը, իսկ գլխավոր հերոսը ներկայացնում է ամերիկյան կողմը: Երեք հերոսները՝ Այրա Ռինգոլդը, Սիմոր Լևովը և Քոուլման Սիլքը ներկայանում են որպես ամերիկյան երազանքի համար իրենց գեներից հրաժարված(քանի որ կա միայն *ամերիկյան* երազանք) հերոս (և միաժամանակ՝ զոհ):

1. «Իմ ամուսինը կոմունիստ է».Ֆիլիպ Ռոթի ամերիկյան եռագրության առաջին՝ «Իմ ամուսինը կոմունիստ է» վեպը գրվել է որպես «վրեժ»՝ գրական պատասխան, հեղինակի նախկին կնոջ՝ Քլեր Բլումի հրատարակած «Լքելով տիկնիկի տունը» հուշագրությանը[1]: Գրքում նկարագրված իրադարձությունները կատարվում են 1950-ականների սկզբին, երբ քաղաքականության մեջ լայն տարածում ուներ մակարտիզմը: Վեպի գլխավոր հերոս Այրան հայտնվում է հասարակության սև ցուցակում այն բանից հետո, երբ նրա նախկին կինը՝ դերասանուհի Եվա Ֆրեյմը, ում կերպարը հիշեցնում է Քլեր Բլումին, հուշագրություն է հրատարակում իր և նախկին ամուսնու կյանքի մասին, որում բացահայտում է, որ Այրան կոմունիստ է: Եվան տեսել էր նրա անունը համապատասխան ցուցակում (ձախթևականները բացահայտվում են 1950-ականներին՝ մակարտիզմի ժամանակ): Դա պատճառ է հանդիսանում, որ Այրա Ռինգոլդից երես թեքեն համարյա բոլորը, ովքեր առաջ նրա կողքին էին: Եվայի

1 Cp. Berman Jeffrey, Leaving a Doll’s House to Marry a Communist: The Roth-Bloom Marriage and Divorce, from Jane Statlender-Slote,Philip Roth The Continuing Presence:New Essays on Psychological Themes,NorthEast Books and Publishing, LLC Newark, Nj, 2013

հուշագրության «Իմ ամուսինը կոմունիստ է» («I Married a Communist») վերնագիրն էլ Ռոթն ընտրել է իբրև գրքի վերնագիր: Ստեղծագործության մեջ ուրվագծվում է իրականությունը երևակայությունից և հեգնանքը հուսահատությունից զատող գիծը: Եվայի կերպարի հիմքում Բլումն է, Այրան ներկայանում է որպես Ռոթ, Եվայի դուստրը՝ Սիլֆիդը, որպես Քլեր Բլումի դուստր Աննա Սթայգեր: Վեպն այդպիսով երկշերտ է. մի կողմից հեղինակի կենսագրական դրվագներն են, որ ներկայացված են Ռոթի տեսանկյունից, մյուս կողմից՝ ամերիկացի մարդու՝ հաջողության հասնելու համար թափած ջանքերի, սեփական անհատականությունից հրաժարվելու պատմությունն ու այն եզրակացությունը, թե ինչպես կարող են քաղաքական հոսանքներն ու ուղղությունները կործանարար լինել առանձին անհատի համար: Վեպի կենտրոնական թեման անհատի երկակիությունն է, ցանկությունը՝ լինել, թվալ ոչ այնպիսին, ինչպիսին իրականում կա: Այրան պատանեկության շրջանից սկսում է հետաքրքրվել քաղաքականությամբ, լինելով համոզված կոմունիստ՝ հետագայում անդամագրվում է կոմունիստական կուսակցությանը: Աբրահամ Լինքոլնին արտաքնապես նման լինելու շնորհիվ սկսում է նմանակել նրան զանազան միջոցառումների ժամանակ: Նույնիսկ իր համար անսպասելիորեն նրա մոտ հաջողությունների շրջան է սկսվում. Այրան հասնում է այն ամենին, ինչ նրանից երբեք չէին սպասի բոլոր նրանք, ովքեր նախկինում ճանաչում էին նրան: Վեպի ընթացքում հեղինակը միշտ զուգահեռներ է անցկացնում նրա և Աբրահամ Լինքոլնի միջև, ով ամերիկյան ժողովրդավարության ու հավասարության խորհրդանիշն է: «Նա փոխանցում էր Լինքոլնի ամեն մի խոսքն այնպես, որ հասկանալի էր լինում դրա պարզ, մարդկային իմաստը: Հիմա, երբ մարդիկ իմանում էին, որ համերգով է եկել Այրա Ռինգոլդը, նրան լսելու էին գալիս իրենց երեխաների հետ: Բեմադրությունից հետո ամբողջ ընտանիքով մոտենում էին, որպեսզի նրա ձեռքը սեղմեին, իսկ երեխաները թույլտվություն էին հարցնում՝ նստելու նրա ծնկներին ու պատմում էին՝ ինչ նվերներ են ցանկանում Սուրբծննդյան տոնի համար»[1]:

Այրան ֆանատիզմի աստիճան տարված է ժողովրդավարության գաղափարներով, որոնք էլ սկսում են պայմանավորել նրա կյանքում ամեն ինչ: Վեպի վերջում Նաթան Ցուքերմանը հիշում է որ իրենց ծանոթության սկզբում իրեն ոգևորում էին Այրայի ճառերը, սակայն հետագայում սարսափելիորեն ձանձրանում էր դրանցից և անում ամեն ինչ, որպեսզի խուսափի նրա հետ հանդիպելուց: Քայքայվում է նաև Այրայի երազային կյանքը: Երեսունհինգ տարեկանում նա կարծես ուներ ամե-

1 Roth Philip, I Married a Communist,Boston:Houghton Mifflin, 1998, p.69

նը, ինչ ցանկանում էր. «Տուն, նա տուուն ուներ: Առաջ չուներ, հիմա ունի, իսկ նա արդեն երեսունհինգ տարեկան է: Երեսունհինգ, ու վերջապես իրականացել է երազանքը. այլևս չի ապրում փոքրիկ վարձով սենյակում, էժանագին սրճարաններում չի ճաշում, այլևս չի քնում բարերի մատուցողուհիների կամ այն աղջիկների հետ, որոնք իրենց անունը երևի մի կարգին չէին էլ կարող գրել»[1],- պատմում է Մերին, որը չի հավատում եղբոր երջանկությանը, որովհետև, ճանաչելով եղբորն ավելի լավ, քան որևէ մեկը, գիտի՝ որքան հեռու է այդ ամենն Այրայի մտածողությունից: Այրան ապրում է մարդկանց մեջ, որոնց հետ ոչ մի ընդհանուր բան չունի, դա նրա հասարակությունը չի ու մի օր զգացնել է տալու: Գլխավոր հերոսին ներկայացնելով որպես Լինքոլնին նմանակող՝ Ֆիլիպ Ռոթը նաև նրբորեն ակնարկում է, որ Այրան նմանակում է ոչ միայն Լինքոլնին: Նմանակելը դառնում է նրա համար սովորական վիճակ. նա նմանակում է քաղաքական գործիչներին, քննադատներին, կուսակցական քաղաքացիներին, մտնում քաղաքականության մեջ՝ առանց հասկանալու դրա բուն էությունը, ի վերջո, նմանակելով ուրիշներին՝ հրաժարվում է սեփական էությունից: Միջոցառումների ժամանակ Այրան նմանակում է Աբրահամ Լինքոլնին, կյանքի փիլիսոփայության մեջ՝ Ջոն Օ՛Դեյին, սակայն միայն արտաքին կողմով՝ բաց թողնելով վերջինին բնորոշ իրական տրամադրությունն ու մտածողությունը: Սա հեղինակը բացահայտ կերպով ցույց է տալիս այն դրվագում, երբ հանդիպելով Օ՛Դեյին ու լսելով մի քանի րոպե նրա ճառը՝ Նաթան Ցուքերմանը միանգամից հասկանում է, թե ումից էր ոգեշնչվել Այրան[2], սակայն նշում է նաև, որ, ի տարբերություն Այրայի, Ջոնի ճառերը նրա մոտ ձանձրույթ ու նյարդայնություն չէին առաջացնում, քանի որ բնօրինակն էին, ոչ թե պատճենը:

Եվան՝ Այրայի կինը նույնպես ամերիկյան երազանքի հաղթանակի մարմնացումն է հիշեցնում, բայց նրա իդեալական կյանքն էլ ավարտվում է, երբ բացահայտվում է նրա իրական էությունը: Այն մասին, որ այս կինը խաղում է ոչ միայն բեմում, այլ նաև կյանքում, ակնարկում է Այրայի եղբայր Մարին, ով նկարագրելով Եվային՝ միշտ նշում է, որ նա քամելեոնի բնավորություն ուներ: Եվան խաղում էր ոչ հրեա կնոջ դեր: Այդ դիմակն այնպես էր սերտաճել նրա դեմքին, որ նա ինքն էլ էր սկսել դրան հավատալ: Ցավոք, նա չգիտեր՝ ինչպես կարելի է ներկայանալ որպես քրիստոնյա բարձրաշխարհիկ տիկին, եթե ոչ որպես հակասեմիտա-

1 Նույնը, էջ 101:

2 Royal Derek Parker, Pastoral Dreams and National Identity in American Pastoral and I Married a Communist, Academy.edu https://www.academia.edu/224870/Pastoral_Dreams_and_National_Identity_in_American_Pastoral_and_I_Married_a_Communist

կանի կերպարով: Այստեղ երևում է սեփական էության ժխտումը, ինքնաոչնչացումը հանուն երազանքի, որը և կործանման է տանում նրան: Առաջին երկու ամուսնությունները Եվային երջանկություն չեն բերում. փայլուն արտաքինի տակ միշտ թաքնված է լինում անճոռնի իրականությունը: Օրինակ՝ նրա աղջկա հայրը, որի նախատիպը դերասան Ռոդ Սթեիգենն է՝ Քլեր Բլումի նախկին ամուսինը, հոլիվուդյան հայտնի դերասան է, ում սիրահարված են հազարավոր կանայք, բայց որն իրականում համասեռամոլ է և ամուսնացել է Եվայի հետ միայն իր հեղինակությունը փրկելու, ճշմարտությունը քողարկելու համար: Եվայի ձգտումը դեպի Այրան, ով կարծես թե ցածր էր նրանից սոցիալական աստիճանով, և ում բռնկուն բնավորությունը բազում խնդիրներ էր բերում, Եվայի ենթագիտակցական ձգտումն է դեպի իր ճշմարիտ էությունը, հրեական արյունը, այն դասը, որին ինքը պատկանում էր ի ծնե, բայց որը պետք է թաքցներ: Եվան Այրային իր կողքին պահելու համար պատրաստ է ամեն ինչի, նույնիսկ երբ չի էլ նկատում դա: Վեպում այս կինը մի քանի անգամ ծնկի է գալիս նրա առջև և գործի դնում դրամատիկական թատրոնում սովորած ամեն մի հնարք, որ ամուսինը չհեռանա իրենից: «Իրական էությունը սառած է նրա մեջ, կա միայն մի կայծ, և այդ կայծը զտված ձևով դերասանուհու, բարձրաշխարհիկ տիկնոջ սերն է կոմունիստ-բանվորի հանդեպ»[1] : Ամուսինն ու կինը կործանում են իրար՝ ջրի երես հանելով այն ամենն, ինչ թաքցնում էին տարիներ շարունակ իրենց երջանկությանը հասնելու համար:

2.«Ամերիկյան հովվերգություն». եռագրության երկրորդ վեպը՝ «Ամերիկյան հովվերգության»-ը այն ստեղծագործությունն էր, որը Ռոթն վերջապես բերեց Պուլիցերյան մրցանակը: Մինչ այդ նա առաջադրվել էր այդ մրցանակի համար չորս ան գամ, բայց չէր հաղթել[2]: իրադարձությունները տեղի են ունենում 1960-ականների ԱՄՆ-ում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ուր հասարակական խնդիրներ էին Վիետնամական պատերազմն ու ապստամբությունը դրա դեմ: Վեպը Շվեդ մականունով, ծագումով հրեա Սիմոր Լևովի մասին է, ով մարմնավորում է «ավետյաց երկրում» ապրող անհատի սենտիմենտալ ձգտումը ամերիկյան երազանքին, և այն, թե ինչպես է դրա թվացյալ իրականացումը փշրվում իրականությանը բախվելուց[3]: Սիմորի կյանքի ողբեր-

1 Карасик О. Б., От «Американской мечты» к «Американской трагедии»: трилогия Филипа Рота, ВЕСТНИКТГГПУ. 2011. No2(24), http://docplayer.ru/48397815-Ot-amerikanskoy-mechty-k-amerikanskoy-tragedii-trilogiya-filipa-rota.html

2 Cp. Kakutani Michiko.''A Big,Rough-Hewn Work Built on a Grand Design'',''New York Times'', 15 April, 1997,p. 5

3 Safer B. Elaine, Mocking the Age; The Later Novels of Philip Roth,Published by State

գությունը երևույթները խորությամբ դիտարկելու ունակության բացակայությունն է, ամեն ինչ իրականում նրա պատկերացրածից բոլորովին այլ էր: Հեղինակային միտումնավոր կամ ենթագիտակցական ակնարկ է դրան հերոսի անունը՝ Seymour, որ անգլերեն համահունչ է see more արտահայտությանը՝ տե՛ս ավելին: Առաջին հայացքից նա ունի այն ամենը, ինչ ցանկացել է: Սիմորը ձգտում է դառնալ ամերիկյան հասարակությանը ներդաշնակ միավոր, ու դա նրա մոտ կարծես թե ստացվում է: Ամենից առաջ նա արտաքնապես նման չէ հրեա տղամարդուն. հերոսի բացառիկ գեղեցկությունը չի վրիպել ոչ մի գրականագետի ուշադրությունից: Սիմորը միջին վիճակագրական փոքրամարմին, ցածրահասակ, դասականորեն երբեք ոչ գեղեցիկ հրեա տղամարդու արտաքին չունի. «Հրեական անվճար միջնակարգ դպրոցի աշակերտներից ոչ մեկը չուներ անգամ նմանվող մի բան այդ շիկահեր, կապուտաչյա վիկինգի կզակի, դիմագծերի անթերի ձևերին[1]», բացի դրանից, նա նաև հաջողակ է սպորտում. «Երիտասարդը բացառիկ օժտված մարզիկ էր. հարձակվող էր ֆուտբոլում, կենտրոնական՝ բասկետբոլում, առաջին բազային՝ բեյսբոլում»: Ֆ. Ռոթի ստեղծագործության մեջ սպորտային խաղերը, հատկապես բեյսբոլը ամերիկացման խորհրդանիշ են, քանի որ հրեաները ավանդաբար աչքի են ընկել իրենց խելոսվ, ոչ թե՝ ֆիզիկականն ուժով, իսկ սպորտը կապված է ֆիզիկական ուժի ու ճարպկության հետ: Ֆիզկուլտուրայի առաջին դասին բոլորի կողմից սիրված մարզիչը՝ Հենրի Ուորդը, դիմում է տասնչորսամայա բարձրահասակ, փայլուն կապույտ աչքերով տղային, որ խաղում էր այդքան սահուն ու լավ. «Որտե՞ղ ես սովորել այսպես խաղալ, շվեդ»[2]: Այդ օրվանից նա ստանում է Շվեդ մականունը ու դառնում դպրոցական լեգենդ: Բոլորը հիանում են նրանով, Նաթան Ցուքերմանը հիշում է, որ դպրոցական տարիներին Սիմորն իր կուռքն էր, բոլորը, այդ թվում՝ Ցուքերմանը, համոզված էին, որ նրան փայլուն ապագա է սպասվում: Ռոթը պատահական չէ իր հերոսին օժտում սկանդինավցու արտաքինով, ճիշտ հակառակ հրեային ու անվանում վիկինգ. Ամերիկա Եվրոպայից առաջին եկողները նավաստի վիկինգներն էին՝ Լեյֆ Էրիքսոնի գլխավորությամբ: Արտաքինի ձևափոխությունը խոսում է այն մասին, որ Սիմորը մի քայլ առաջ է անցել ամերիկյան երազանքի իրագործման ճանապարհին. նա վերափոխված է «իսկական ամերիկացու» ոչ միայն հոգեպես, այլ նաև ֆիզիկապես:

University of New York Press, Albany, 2006, State University of New York,Printed in SUNY series in Modern Jewish Literature and Culture, editor Sarah Blacher Cohen, p.79

1 Roth Philip, American Pastoral,Boston:Houghton Mifflin, 1998, p.91

2 Նույնը, էջ 269:

Նա ամուսնանում է գեղեցկության մրցույթի հաղթող միսս Նյու-Ջերսիի՝ Դուտնի Դոյերի հետ, հորից ժառանգում կանացի ձեռնոցներ արտադրող շահութաբեր գործարանը, դառնում Օլդ-Ռիմրոքում գտնվող հինավուրց առանձնատան տեր, հաջողում և՛ ֆինանսական, և՛ անձնական ոլորտներում, ներկայացնում այն գործարարի արդյունավետ՝ efficient քաղաքացու օրինակը, որ համարվում էր ամերիկյան իդեալ: Հերոսն էմերսոնյան self-relience-ի կրողն է, ամերիկյան երազանքը կարծես թե ի կատար է ածել:

Եթե Այրա Ռինգոլդը համեմատվում էր Աբրահամ Լինքոլնի հետ, Շվեդը կարծես Ամերիկայի մեկ այլ սիրեցյալի՝ Ջոն Ֆ. Քեննեդու նմանակն է. հեղինակը միտումնավոր կերպով նրանց նմանեցրել է նաև արտաքինով[1]: Քեննեդին Շվեդից միայն տաս տարի էր մեծ, ու ինքն էլ ամերիկյան երազանքի մարմնացում էր: Բայց ինչպես Ջ. Քեննեդու կյանքն է անսպասելի կերպով ողբերգական ավարտ ունենում, այնպես էլ Սիմորի դրախտային կյանքը: Նրա բոլոր դրական հատկանիշները տարօրինակ կերպով առաջացնում են քաղաքական ինքնասպանության նման մի բան, ինչի պատճառով նմանությունը Քեննեդուն դառնում է անժխտելի[2]: Այդքան խնամքով ստեղծած «դրախտից» նրան արտաքսում է դուստրը՝ Մերին՝ երրորդ սերնդի ներկայացուցիչը, ում հեգնորեն տրված է աստվածամոր անունը: Հաջողակ ու գեղեցիկ հոր ու գեղեցկության թագուհի մոր դուստրը կակազ է լինում: Սա դառնում է առաջին շեղումը դրախտի նախագծից: Մանկությունից տառապելով դժվարախոսությամբ՝ նա չի կարողանում հաղթահարել դա ու որոշում է հաջողել այլ ոլորտներում: Շվեդի դուստրը, որին նա պաշտում էր, «ուներ ոսկեգույն մազեր, զարգացած տրամաբանություն, ինտելեկտի բարձր մակարդակ ու հասուն մարդու հումորի զգացում, որի մեջ կար ինքնահեգնանք, երկար բարեկազմ ոտքեր, հարուստ ընտանիք, ամուր կամք... ահապահովվածության, առողջության, սիրո առհավատչյա, ամեն ինչ, բացի ամենատարրական բաների շուրջ հանգիստ արտահայտվելու կարողությունից»[3]: Մերին ստիպված էր ամեն ինչ անել, որ կակազը դադարի լինել իր աշխարհի կենտրոնը: Դրա սուբլիմացիան վաղ տարիքից ապստամբ բնավորության ձևավորումն էր. Մերին հակադրվում է բոլոր արժեքներին, որ ունեին ծնողները, նա չի հավատում ոչ մի ամերիկյան կարգախոսի,

1https://go.mail.ru/search_images?fr=atom&frm=main&q=kennedy&gp=501049

2Цуганова Е. А., «Американская пастораль» Филипа Рота: от пасторали к постмодернизму,научная статья по специальности «Языкознание и литературоведение» https://cyberleninka.ru/article/n/amerikanskaya-pastoral-filipa-rota-ot-pastorali-k-postmodernizmu/viewer

3Roth Philip, American Pastoral,Boston:Houghton Mifflin, 1998, p.126

որին հավատում էին ծնողները: Ինչպես հեգնանքով ձևակերպում է նրա մայրը. «Դու դեմ չես պատերազմին. դու ամենինչադեմ ես»[1]. ամեն հաջորդ սերունդ տեսնում է նախորդի սահմանափակությունը ու քայլ է անում առաջ: Մերին վաղ տարիքից օգտագործում է սննդի նկատմամբ վերաբերմունքը որպես մանիպուլյացիայի միջոց: Ամեն ինչ սկսվում է տան սննդից հրաժարվելուց. աղջիկը հրաժարվում էր դպրոց տանել նախաճաշը, որ մայրը դնում էր նրա համար, որովհետև այդ ուտելիքի ավելի «հարուստ» լինելը կարող էին նկատել համադասարանցիները: Նա ամեն ինչ անում էր այդ սնունդն իր հետ չտանելու համար, օրինակ՝ ասում էր, որ ապուր է ուզում և ջարդում էր դրա համար նախատեսված՝ մոր տված ափսեներն ու թերմոսները, պահում էր միայն փոքրիկ գումար, որով կարող էր նախաճաշ գնել դպրոցի ճաշարանից: Մերիի համար ընտանիքից հեռանալու, անկախանալու միջոց էր այն, որ նա ինքն էր որոշում՝ ինչ ուտի. «Տանը նա գրեթե ոչինչ չէր ուտում, բայց դրսում անընդհատ ծամում էր. չիզբուրգերներ ու կարտոֆիլի ֆրի, պիցցա, սոխի տապակած կլորակներ, վրայից էլ խմուր էր կաթնային կոկտեյլներ ու լիմոնադ, ուտում պաղպաղակ, միանգամից մի քանի թխվածքաբլիթ»[2]: Աղջիկը գիրանում է ու տասնվեց տարեկանում արդեն ունենում ավելորդ քաշի ակնհայտ խնդիր: Ծնողները չէին հասկանում, թե ինչպես է իրենց թեթև ու ճկուն երեխան դառնում գեր, համարյա վեց ֆութ հասակ ունեցող, չսանրված ու կեղտոտ ատամներով, թափթփված քայլվածքով դեռահաս: Ավելի մեծ հասակում, երբ հայրը տեսնում է նրան վերջին անգամ, նա կտրուկ փոխած է լինում իր սննդային սովորությունները՝ անցնելով հակառակ ծայրահեղությանը՝ ծոմ պահելուն: «Մերին կիրառում է սնունդը որպես ամերիկյան երազանքի միֆական պատկերացումների դեմ պայքարի միջոց»[3]: Տան սննդից հրաժարվելը խորհրդանշում է նաև նրա հրաժարումը «մայրական կրծքից». նա հրաժարվում է այն ամենից, ինչ ստեղծել են ծնողները, նրանց հետ ամեն մի նմանությունից մինչև այն աստիճան, որ գիրանալով՝ փորձում է տարբերվել նաև արտաքնապես: Նրա մարմնի ճարպը դառնում է պատնեշ իր և ծնողների միջև, հետագայում այն փոխարինվում է բերանին կապվող լաթի կտորով, որ օգտագործում էին ջայնաները՝ շնչելու ժամանակ չվնասելու համար օդում գտնվող մանր օրգանիզմներին:

Արտաքին ուժերը, որ քանդում են Շվեդի ամերիկյան դրախտը,

1Roth Philip, American Pastoral,Boston:Houghton Mifflin, 1998, p.23

2 Ibid,p. 133

3 Bylynd S., Merry Levov's BLT crusade: Food-fueled revolt in Roth's American Pastoral//Philip Roth studies.-Baltimore:Purdueuniv. Press, 2010.-Vol.6.-N1.-P. 15

Վիետնամական պատերազմն ու դրա դեմ բողոքի ալիքներն են: Նրա աղջիկը դառնում է բողոքի մասնակից-ահաբեկիչներից մեկը. ռումբեր է սարքում, պայթեցնում, ինչի հետևանքով մարդիկ են մահանում: Միայն ռումբեր սարքելու ժամանակ է նա հանկարծակի հաղթահարում կակազը: Մերին փախչում է տնից, կյանքի վերջում ապրում իր՝ Իսրայելից գաղթած նախնիներից էլ աղքատ ու մահանում սովից: Հոր և աղջկա հակամարտությունը ոչ միայն անհատականության և սկզբունքների շուրջ է, այլ նաև ծագումնաբանական, քանի որ Սիմորի՝ ներգաղթյալ հրեայի համար անհասկանալի են բոլոր այն քայլերը, որոնց դիմում է նրա ամերիկացի դուստրը: Բացի դրանից, նրանց կերպարների միջոցով ներկայացվում է ժամանակաշրջանների հակամարտությունը. հին արժեքների կրող Սիմորը միշտ հավատարիմ է իր անհատականությանը, որն ինքն է կերտել, իսկ Մերին պոստմոդեռնիզմի կրողն է ու խորհրդանշում է անհատականության քայքայումը, ինչի այլաբանական վկայությունն է նրա մահը: Մերին, իր ընտրած կրոնի՝ հնդկական ջայնիզմի պոստուլատներից մեկի՝ սալլահանայի ծիսական ինքնասպանության համաձայն, ինքն իրեն սովամահ է անում: Մարմնի քայքայումը զուգորդվում է հոգու և անհատականության քայքայման հետ, որը պատկերվում է անգամ ֆիզիկական հատկանիշների միջոցով. երբեմնի գեր աղջիկն այնքան է նիհարում, հյուծում իրեն ֆիզիկապես, որ սովից մահանում է. «Նա (Մերին-Լ.Ա.) պոստմոդեռնիստական սարսափն է, որն այնքան է դուրս գալիս սուբյեկտիվության սահմաններից, որ, ի վերջո, որոշում է վերջնականապես հրաժարվել սեփական էությունից»[1]: Մերին դուրս է հանում հորն ամերիկյան «ավետյաց երկրից» ու գցում ամերիկյան «եռացող կաթսան»:

Մերիին վերջին անգամ տեսնելուց հետո Շվեդը նաև պարզում է, որ կինը դավաճանում է իրեն իրենց հարևան անգլոսաքսոն մի տղամարդու՝ Օրքաթի հետ, ով հետագայում դառնում է նրա երկրորդ ամուսինը, որի նկատմամբ միշտ խոր թշնամանք ու հակակրանք էր ցույց տվել: Դոունը նույնպես փորձում է թվալ ոչ այն, ինչ իրականում կա: Սիմորը ստիպված է հրաժարվում մինչ այդ կառուցած իր կյանքից և սկսում զրոյից: Ամերիկյան երազանքի կարծես թե հաջող կառուցվածքի խորհրդանիշն այս ընտանիքի տունն է, որը, ինչպես Դոունն է մի անգամ խոստովանում ընկերուհուն, երբեք տանել չի կարողացել. «Սա անտանելի հայտնություն է Լևովի համար, որը խնամքով պլանավորել ու նախագծել էր տան յու-

1 Parrish T.,The End of Identity:Philip Roth’s «American Pastoral»//Shofar.-Baltimore: Purdue uviv. Press,2000.-Vol.19,Spec. issue 1,p. 93

րաքանչյուր անկյունը»[1]:Հատկանշական է, որ Օրքաթը մասնագիտությամբ ճարտարապետ է. նրա օգնությամբ Դոունը պիտի կառուցի իր նոր «տունը»: Այսպիսով, այլ կերպ են ընկալվում Սիմորի կողմից անընդհատ կրկնվող խոսքերը, որ ինքը չկարողացավ Մերին տանը պահել. Սիմորը ամեն ինչ անում է մնալու համար ամերիկյան հովվերգության նախագծի մեջ, իսկ Մերին անընդհատ ձգտում է դեպի դուրս:

3.«Մարդկային խարան». ամերիկյան շարքի վերջին՝ երրորդ վեպը«Մարդկային խարանն է» (2000թ.), որում պատմվում են 1990-ականներին տեղի ունեցած դեպքերը: Գլխավոր հերոսը Քոուլման Սիլքն է, ում պատմությունը, ինչպես նախորդ երկու գրքերի հերոսներինը, գրի է առնում Նաթան Ցուքերմանը: Եթե Այրա Ռինգոլդը համեմատվում էր Աբրահամ Լինքոլնի հետ, իսկ Սիմոր Լևովին համապատասխանում էր Ջոն Քեննեդիին, այս վեպում զուգահեռ է անցկացվում գլխավոր հերոսի և Բիլ Քլինթոնի միջև: Սիլքը առանձնանում է Ֆիլիպ Ռոթի ստեղծագործության բոլոր հերոսներից նրանով, որ միակն է, ում ձեռնտու էր լինել հրեա, երբ մնացախ հեևոսները, հասնելու համար իրենց ամերիկյան երազանքին, հրաժարվում են իրենց եբրայական գեներից: Նա մաշկի բաց երանգ ունեցող սևամորթ էր, ով ներկայանում է որպես հրեա, որը փափագում է հասնել ամերիկյան իր երազանքին: Քոուլման Սիլքը, հրաժարվելով իր ռասսայից, հետ է կանգնում նաև սեփական ընտանիքից ու անցյալից, հեռանում է տնից և այլևս երբեք չի տեսնում մորը, քրոջն ու եղբորը: Պատահական չէ, որ Քոուլմանի երկրորդ անունը Բրուտոս է. ակնարկվում է ընտանիքի անդամներին դավաճանելու նրա հակումը: Փոխելով իր «գույնը»՝ նա ստանում է այն, ինչի մասին երազում էր, սակայն այդ խարխուլ հովվերգությունը ավարտվում է ամենահեգնական ձևով: Քոուլմանն իր երկու ուսանողուհիներին, որոնց երբեք չէր տեսել իր դասախոսություններին, անվանում է spooks՝ նկատի ունենալով բառի «ուրու», «հոգի» իմաստը, իսկ աղջիկները, լինելով սևամորթներ, մեղադրում են նրան ռասսայական խտրականության մեջ, քանի որ այդ բառը նաև արհամարհական դիմելաձև էր սևամորթներին: Քոուլմանը չի խոստովանում իր իրական ռասսայական պատկանելությունը նույնիսկ այն ժամանակ, երբ գիտեր, որ կկորցնի ամեն ինչ:

Ֆիլիպը Ռոթը իր ստեղծագործությունների մեջ հաճախ է դիմում անտիկ թեմաներին: Այս վեպն էլ բացառություն չէ: Վեպն ունի բազում հղումներ անտիկ գրականությանը, գրված է Սոֆոկլեսի «Էդիպ արքա» ողբերգության նմանությամբ: Անտիկ թեման՝ հարմարեցված ամերիկ-

1 ՍեդրակյանԱնուշ, ՖիլիպՌոթի «Ամերիկյանհովվերգություն» վեպը | «Համատեքստ - 2009», ԵՊՀ, հրատ., Երևան, 2010, էջ 63

յան իրականությանը: Ողբերգությունը հերոսների՝ ցանկալիին հասնելու համար արած քայլերի և ճիշտ հակառակ արդյունքի հասնելու մեջ է: Ինչպես Էդիպը, այնպես էլ Սիլքը թաքցնում են իրենց իրական էությունը, ինչի համար պատիժը վրա է հասնում մի քանի տարի անց: Ինչպես Էդիպը ծաղկեցրեց իր հոր թողած թագավորությունը, այնպես էլ Սիլքը երկրորդ կյանք տվեց Աթենք համալսարանին, որը հայտնի դարձավ նրանով, որ հաստատության պատմության մեջ առաջին անգամ աշխատանքի ընդունեց սևամորթ դասախոսի: «Մարդկային խարանը» սկսվում է Սոֆոկլեսից մեջբերմամբ, որտեղ խոսվում է մեղքը միայն այրամբ մաքրել կարողանալու մասին. Քոուլման Սիլքը նույնպես կարողանում է մաքրել իր մեղավորությունը միայն իր մահվանից հետո: Նրա կինը՝ Իրիսը, ինչպես Իոկաստան, գիտեր, թե իրականում ով է իր ամուսինը, ու նրան սպանում է հենց իր ամուսնու գաղտնիքը[1]: Ինչպես Էդիպը, այնպես էլ Քոուլմանն ուներ իրական ինքնության մասին մարմնական հիշեցում. Էդիպի դեպքում դա վնասվածքի պատճառով ուռած ոտնաթաթերն էին, Քոուլմանի դեպքում՝ այն դաջվածքը, որը նրա վրա արել էին հասարակաց տնից դուրս շպրտելուց հետո. հենց այդ դեպքից հետո նա որոշեց ներկայանալ որպես հրեա: Դաջվածքը խորհրդանշում է նրա իրական էությունը, որը թաքցվում է. այն կապված է մաշկի հետ և հնարավոր չէ ջնջել: Ժամանակակից աշխարհում կոսմետոլոգիական զանազան պրոցեդուրաների զարգացման շնորհիվ հնարավոր է ավելի աննկատ դարձնել կամ փոխել դաջվածքը, բայց ոչ վերջնականապես ազատվել դրանից, իսկ տասնամյակներ առաջ, երբ արեցին Սիլքի դաջվածքը, դրանից ազատվելն ընդհանրապես անհնար էր, ինչպես սեփական գեներից: Ինչպես իր սևամորթ լինելը, այնպես էլ այդ դաջվածքն ինքը Քոուլմանը չի ընտրել[2]:

«Մարդկային խարանը» գրական այն գործերի խմբին է պատկանում, որտեղ հերոսները գիտեն ավելին, քան ընթերցողը: Երբեմն ընթերցողը գիտի ավելին, քան հայտնի է գրքի հերոսներով, ինչպես, օրինակ, Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության դեպքում: Երբեմն էլ հակառակը՝ հերոսները գիտեն ավելին, քան ընթերցողը, օրինակ՝ նույն Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը: «Մարդկային խարանի» կերպարները կարծես գաղտնիքների մշտական կրողներ են, որոնցով վերջում են կիսվում կարդացողի հետ: Հետաքրքրական է Քոուլմենի սիրելի կնոջ՝ Ֆաունիի կերպարը, ով արտաքինից ու կենսագրությամբ վերջինիս հակադրությունն է:

1Bakewell Geoffrey W., «Philip Roth's Oedipal *Stain*», Academia.edu https://www.academia.edu/11431818/_Philip_Roths_Oedipal_Stain_

2 Ibid

Ֆաուլնին մանկության ժամանակ ուներ այն ամենը, ինչի մասին երազում էր Քոուլմանը: Նրա մանկական կյանքը, քաղաքից դուրս գտնվող հսկայական տունը, հարստությունը, գյուղական գողտրիկ, գեղեցիկ կյանքը հիշեցնում են Սիմուր Լևովի կյանքը «հովվերգության» մեջ: Սակայն Ֆաուլնին մանկուց գիտեր արտաքին շքեղության հակադրությունը ներքին անճոռնիությանը: Նա մորն ու հոգեբանին պատմում է խորթ հոր կողմից սեռական բռնության ենթարկվելու մասին, բայց նրան չեն հավատում, քանի որ Ամերիկայում «հավատում են նրան, ով վճարում է»[1]: Նրա կյանքն ամերիկյան կյանքի ցուցադրումն է դրսից ու ներսից: Հերոսուհին չի ձգտում հասնել ամերիկյան երազանքի, քանի որ մանկուց գիտեր դրա իրական՝ պատրանքային բնույթը, այն, որ դա միայն տեսողական խաբկանք է: Պատահական չէ նրա անվան նմանությանը «ֆաուլնա» բառին. Ֆաուլնին մեկն է, ով ձգտում է բնության պարզությանը: Նա երկար տարիներ թաքցնում է գրաճանաչ լինելը, որը, ինչպես և Սիլքի գաղտնիքը, բացահայտվում է միայն նրա մահվանից հետո: Ֆաուլնին մեկն է, ով չունի ինտելեկտուալ զարգացման բարձր մակարդակ, բայց գիտի իրերի բնական էությունը: Նրան հակադրվում է Դելֆինա Ռոուի կերպարը, ում անունը հեղինակը հեգնաբար նմանահունչ է դարձրել անտիկ Դելֆյան տաճարին, որի մուտքին գրված էր. «Ճանաչի՛ր ինքդ քեզ, ճանաչի՛ր չափդ»: Ինտելեկտուալ ու կիրթ դասախոս Դելֆինան, ով Ջորջ Բաթայի մասին է ատենախոսություն պաշտպանել, ունի հսկայածավալ տեղեկատվություն, սակայն չգիտի ինքն իրեն:

«Վրդովմունք» և «Նեմեսիս». Ռոթի հերոսները չեն կարողանում հասնել իրենց ամերիկյան երազանքին. երազանքին հակադրվում է ճակատագիրը, ու ոչ մի գործում դա այնպես չի շեշտվում, որքան «Վրդովմունք» և «Նեմեսիս» վեպերում: Ճակատագիրն ու մահը հելլենիստական թեմաներ են. հելլենիզմը հեռու է և եբրայականությունից, և ամերիկյան կյանքի փիլիսոփայությունից: «Վրդովմունքում» հեղինակը ցույց է տալիս ճակատագրի անողոքությունը հերոսի հյուսած բոլոր ծրագրերի ու անձնական արժանիքների նկատմամբ, երբ մի փոքրիկ պատահականություն կարող է հասցնել կործանման: Սիմոր Լևովի կերպարի միջոցով Ռոթը ցույց է տալիս ճակատագրի անարդարությունը. սա ակնարկվում է «Ամերիկյան հովվերգության» ողջ ընթացքում, դրա բացահայտ ցուցադրությունը Ցուքերմանի այն խոսքերն են, որ Սիմորը վերջապես հասկանում է կյանքի մասին ամենասարսափելի ճշմարտությունը՝ դրա ընթացքը տրամաբանություն չունի: «Նեմեսիսում» Բաքին երեխա ժամանակ սպանում է առնետին, որ հիվանդության խորհրդանիշն է, սակայն դա

1Roth Philip, The Human Stain,Boston:Houghton Mifflin, 2000,p. 187

չի խանգարում համաճարակի տարածմանը[1]: Աստված, որի նկատմամբ չարանում է Բաքին, այստեղ ոչ թե քրիստոնեական Աստվածն է, այլ հունական վրիժառու Նեմեսիսը(այստեղ կարելի է հիշել, որ Նեմեսիսը ոչ միայն հունական աստվածուհու անունն է, այլ նաև՝ գրական տերմինը, որով անվանում են գրական ստեղծագործության մեջ հերոսին պատժելու երևույթը[2]):Այս վեպը նույնպես ունի բացահայտ հղումներ Սոֆոկլեսի «Էդիպուս Արքային», օր՝. Երկու գործերի գլխավոր հերոսներն էլ իրենց քաղաքում բռնկված համաճարակի «պատճառն» են, բայց չգիտեն այդ մասին. եթե Էդիպուսի դեպքում համաճարակը աստվածների պատիճն էր նրա կատարած մեղքերի համար, Ֆիլիպ Ռոթի վեպում Բաքին պոլիոմելիրիտի անախտանիշ կրողն է և, չիմանալով այդ մասին, տարածում է հիվանդությունը երկու քաղաքում:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ Ֆիլիպ Ռոթի ստեղծագործություններից շատերն են նվիրված ամերիկյան երազանքին. դրանց մեջ բացահայտվում է ամերիկյան երազանքի վերափոխումը ամերիկյան ողբերգության, ինչը տեղի է ունենում հիմնականում հերոսների՝ սեփական ինքորոշումը կորցնելու պատճառով,նրանց ցանկության թվալ այն, ինչ իրականում չեն: Եռագության վեպերից յուրաքանչյուրի հերոսը սահմանում է, թե ինչի համար է սիրում Ամերիկան, հետո պարզում, որ իր սիրելու պատճառները իարկանում պատրանք են: Ամերիկյան երազանքին հասնելու համար հրեա հերոսները հրաժարվում են իրենց եբրայական գեներից, քանի որ չկա «եբրայական երազանք»,կա միայն ամերիկյան: իսկ Քոուլման Սիլքը հակառակը՝ ընտրում է իր համար եբրայական ինքնություն՝ խուսափելու համար սևամորթների նկատմամբ եղած անարդարություններից, սակայն նրա կյանքի վերջում դա ուղղվում է իր դեմ. եթե սկզբից նրան չէին ընդունում, որովհետև սևամորթ էր, հետո չեն ընդունում, քանի որ սպիտակամորթ է: Ի վերջո, ամերիկյան երազանքը վերածվում է ողբերգության, քանի որ երազանքը այնքան ուժեղ չէ, որքան ճակատագիրը: Իսկ ճակատագիրը կարող է ամեն ինչ դասավորել հերոսների պատկերացրածի ճիշտ հակառակ ձևով, ինչը հեղինակը ցույց է տալիս՝ դիմելով«Վրդովմունք» և «Նեմեսիս» գործերում:

1Philip Roth’s Latest Novel, Nemesis, The Broadkill Review,Volume 5, issue 1

2Նեմեսիս՝հատուցում կամպատիժ սխալ արարքի համարկամ այն ուժը, որ իրականացնում է այդ պատիժը, այն հաճախանձնավորվածէՆեմեսիսի տեսքով՝ հունական աստվածուհու, որ պատասխանատու է աստվածների վրեժխնդրությունը մեղսավոր մարդկանց նկատմամբ իրականացնելու համար: Տերմինըկիրառվումէհատկապես գլխավոր հերոսի պատժի համար նրա կամակորության՝ հյուբրիսիհամար,տե՛ս. Baldick Chris, Oxword Dictionary of Literary Terms,Oxford University Press, Revised Edition, 2004, p. 54

LUSINE ADAMYAN - THE SUBJECT OF AMERICAN DREAM AND ITS TRANSFORMATION IN THE FICTION OF PHILIP ROTH - This article is devoted to the analysis of American Dream and its transfiguration into American Tragedy in the works of modern American Jewish writer Philip Roth, particularly in his American trilogy:«I Married a Communist», «American Pastoral» and «The Human Stain»,where characters' illusory happiness is usually destroyed because of their denial of themselves, urge to appear the person they are not.

ЛУСИНЕ АДАМЯН - ТЕМА АМЕРИКАНСКОЙ МЕЧТЫ, ЕЕ ПЕРЕОСМЫСЛЕНИЯ И ПЕРЕВОПЛОЩЕНИЯ В ТВОРЧЕСТВЕ ФИЛИПА РОТА - В данной статье анализируется тема американской мечты и ее превращения в американскую трагедию в произведениях современного американского писателя еврейского происхождения Филипа Рота, в частности, в его так называемой американской трилогии: «Мой муж-коммунист», «Американская пастораль» и «Людское клеймо». Причиной разрушения иллюзорного счастья героев в основном становится их отказ от собственной идентичности ради мечты, стремление казаться тем, чем они в реальности не являются.

Referenses

1.Baldick Chris, Oxword Dictionary of Literary Terms, Oxford University Press, Revised Edition, 2004

2.Bakewell Geoffrey W., «Philip Roth's Oedipal *Stain*», Academia.edu https://www.academia.edu/11431818/_Philip_Roths_Oedipal_Stain_

2.Baldick Chris, Oxword Dictionary of Literary Terms, 4-th edition,

3. Berman Jeffrey, Leaving a Doll's House to Marry a Communist: The Roth-Bloom Marriage and Divorce, from Jane Statlender-Slote,Philip Roth The Continuing Presence:New Essays on Psychological Themes,NorthEast Books and Publishing, LLC Newark, Nj, 2013

4. Bylynd S., Merry Levov's BLT crusade: Food-fueled revolt in Roth's American Pastoral//Philip Roth studies.-Baltimore:Purdueuniv. Press, 2010.-Vol.6.-N1

5.Kakutani Michiko.''A Big,Rough-Hewn Work Built on a Grand Design'',''New York Times'', 15 April, 1997

6.Lazaryan A., Hambardzumyan N.,Hairapetyan A., English-Armenian Dictionary, ՄԱՆՄԱՐ հրատ.,Երևան, 2011թ.

7.Royal Derek Parker, Pastoral Dreams and National Identity in American Pastoral and I Married a Communist, Academy.edu https://www.academia.edu/224870/Pastoral_Dreams_and_National_Identity_in_American_Pastoral_and_I_Married_a_Communist

8. Philip Roth's Latest Novel, Nemesis,The Broadkill Review, Volume 5, issue 1

9. Safer B. Elaine, Mocking the Age; The Later Novels of Philip Roth,Published by State University of New York Press, Albany, 2006, State University of New York,Printed in SUNY series in Modern Jewish Literature and Culture, editor Sarah Blacher Cohen

10. Parrish T.,The End of Identity:Philip Roth's «American Pastoral»//Shofar.-Baltimore:Purdue uviv. Press,2000.-Vol.19,Spec. issue 1

11. Карсик О. Б., От «Американской мечты» к «Американской трагедии»: трилогия Филипа Рота, ВЕСТНИКТГГПУ. 2011. No2(24), http://docplayer.ru/48397815-Ot-amerikanskoy-mechty-k-amerikanskoy-tragedii-trilogiya-filipa-rota.html

12. Цуганова Е. А., «Американская пастораль» Филипа Рота: от пасторали к постмодернизму,научная статья по специальности «Языкознание и литературоведение» https://cyberleninka.ru/article/n/amerikanskaya-pastoral-filipa-rota-ot-pastorali-k-postmodernizmu/viewer

13. Тешева М.М. кпн, Бузарова Е.А. Кпнконцепт «Американская Мечта»: Его Структура И Составляющие В Произведениях Ф.С.Фицджеральда «Великий Гэтсби» И Т.Драйзера «Сестра Кэрри» http://rusnauka.com/12_NBG_2016/Philologia/3_210624.doc.htm

14.Roth Philip, American Pastoral,Boston:Houghton Mifflin, 1998

15. Roth Philip, I Married a Communist,Boston:Houghton Mifflin, 1998

16. Philip Roth, The Human Stain,Boston:Houghton Mifflin, 2000